Հասցեատեր՝
«Փյունիկ ՖԱ» ՀԿ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@fcpyunik.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04.04.2025թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նազելի Արսենյան
	Նարեկ Ադամյան
	Հենրիկ Խաչատրյան
	Դավիթ Բակլաչյան
	Արփի Լազարյան

Վարույթ՝ ԱԽ-097

Խախտում՝

1. «Փյունիկ ակադեմիա» թիմի ֆուտբոլիստ Սերգեյ Հարությունյանի (31664) կողմից բռնարարքը մրցակցի նկատմամբ (Հավելված 1 Բ, 15-րդ կետ)
2. «Փյունիկ ակադեմիա» թիմի ֆուտբոլիստ Կարեն Հովակիմյանի (29032) կողմից բռնարարքը մրցակցի նկատմամբ (Հավելված 1 Բ, 15-րդ կետ)
3. Խաղի ժամանակահատվածում «Փյունիկ ակադեմիա» թիմի ֆուտբոլիստների անկարգություններ առաջացնող գործողություններ իրականացնելը (Հավելված 1 Ա, 16-րդ կետ)

Առաջնություն՝ 2024-2025 Հայաստանի Առաջին Խմբի Առաջնություն

Խաղ՝ «Անդրանիկ» - «Փյունիկ Ակադեմիա», 24.03.2025թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Փյունիկ ակադեմիա» թիմի ֆուտբոլիստ Սերգեյ Հարությունյանին (31664) որակազրկել 5 (հինգ) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի մարտի 24-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100,000 ՀՀ դրամի չափով:
Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 3 (երեք) խաղը, պայմանականորեն չկիրառել: «Փյունիկ ակադեմիա» թիմի ֆուտբոլիստ Սերգեյ

Հարությունյանի (31664) նկատմամբ փորձաշրջան սահմանել 2 (երկու) ամիս ժամկետով՝ մինչև 2025 թվականի մայիսի 24-ը ներառյալ:

2. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Փյունիկ ակադեմիա» թիմի ֆուտբոլիստ Կարեն Հովակիմյանին (29032) որակազրկել 2 (երկու) խաղով: «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով: Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցն ամբողջությամբ՝ 2 (երկու) խաղը, պայմանականորեն չկիրառել:«Փյունիկ ակադեմիա» թիմի ֆուտբոլիստ Կարեն Հովակիմյանի (29032) նկատմամբ փորձաշրջան սահմանել 2 (երկու) ամիս ժամկետով՝ մինչև 2025 թվականի մայիսի 24-ը ներառյալ:
3. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:

- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։